



Համարը ՀՕ-237-Ն
Տիպը Օրենք
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2008.12.30/76(666) Հոդ.1420
Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով
Ստորագրող մարմինը ՀՀ Նախագահ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.01.2009

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 26.12.2008
Ստորագրման ամսաթիվը 29.12.2008
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

☒ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի դեկտեմբերի 26-ին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 6-րդ հոդվածի 33-րդ կետից հանել «կամ հավատարմագրված փաստաբանին» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը լուծում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով: Վճռաբեկ բողոքը համարվում է վարույթ ընդունված, եթե դրան կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեծամասնությունը: Վարույթ ընդունված վճռաբեկ բողոքները վճռաբեկ դատարանը քննում է կոլեգիալ՝ նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով:»:

Հոդված 3. Օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասում «2-րդ կետով» բառերը փոխարինել «2-րդ և 2.1-րդ կետերով» բառերով:

Հոդված 4. Օրենսգրքի 376.1-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ կետով.

«2.1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով.»:

Հոդված 5. Օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ կետով.

«2.1) սույն օրենսգրքի 376.1 հոդվածի 2.1-րդ կետով նախատեսված դեպքում՝ սույն օրենսգրքի 426.3 և 426.4 հոդվածներով սահմանված ժամկետներում.»:

Հոդված 6. Օրենսգրքի 380.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 380.1. Վերաքննիչ բողոք բերելու հիմքերը

1. Վերաքննիչ բողոք բերելու հիմքերն են՝

- 1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի էլքի վրա.
- 2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:»:

Հոդված 7. Օրենսգրքի 381-րդ հոդվածի 1-ին մասի 5.1-րդ կետը «հիմնավորումները» բառից հետո լրացնել «, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը» բառերով:

Հոդված 8. Օրենսգրքի 395-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Բողոքարկված դատական ակտը բեկանվում կամ փոփոխվում է, եթե հաստատվել է նոր երևան եկած կամ նոր հանգամանքը, որն ազդել է դատական ակտի օրինականության կամ հիմնավորվածության վրա:»:

Հոդված 9. Օրենսգրքի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետից հանել «վճռաբեկ դատարանում հավաստարմագրված փաստաբանների միջոցով» բառերը:

Հոդված 10. Օրենսգրքի 405-րդ հոդվածի «վճռաբեկ դատարանը՝ ողջ» բառերը փոխարինել «վճռաբեկ դատարանի քրեական պալատը՝ նախագահի և առնվազն երեք դատավորի» բառերով:

Հոդված 11. Օրենսգրքի 406-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝

- 1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի էլքի վրա.
- 2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:»:

Հոդված 12. Օրենսգրքի 407-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը «էլքի վրա» բառերից հետո լրացնել «, կամ ինչ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներ են առկա» բառերով:

Հոդված 13. Օրենսգրքի 414.1-րդ հոդվածում՝

- 1) 2-րդ մասի «10 օրվա» բառերը փոխարինել «մեկ ամսվա» բառերով.
- 2) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 14. Օրենսգրքի 414.2-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) առկա է նոր երևան եկած կամ նոր հանգամանք:».

- 2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վճռաբեկ դատարանին ներկայացված վճռաբեկ բողոքների՝ սույն օրենսգրքի 407 հոդվածի և սույն հոդվածի առաջին մասի պահանջներին համապատասխանության հարցը պարզելու և դատարանի վարույթ ընդունելու կամ վերադարձնելու հարցը լուծվում է կոլեգիալ՝ վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահի և առնվազն երեք դատավորի կազմով: Պալատի այդ որոշումները համարվում են ընդունված, եթե դրանց կողմ է քվեարկել նիստին ներկա դատավորների մեծամասնությունը:».

- 3) 3-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 15. Օրենսգրքի 416-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 416. Վճռաբեկ դատարանի նիստերը

Պալատի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է առնվազն չորս դատավոր:»:

Հոդված 16. Օրենսգրքի 423-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Որոշումը կայացվում է բաց քվեարկությամբ: Վճռաբեկ դատարանի որոշումը համարվում է ընդունված, եթե դրա օգտին քվեարկել է նիստին ներկա դատավորների մեծամասնությունը: Չայների հավասարության դեպքում ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է ամբաստանյալի համար:»:

Հոդված 17. Օրենսգրքի 12.1-րդ բաժնում «դիմում» բառը և դրան համապատասխան հոլովաձևերը փոխարինել «բողոք» բառով և դրան համապատասխան հոլովաձևերով, իսկ «դիմող» բառը և դրան համապատասխան հոլովաձևերը փոխարինել «բողոք ներկայացրած անձ» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 18. Օրենսգրքի 426.1-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 426.1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայող դատարանը

Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է վերաքննիչ դատարանը, իսկ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների դատական ակտերը՝ վճռաբեկ դատարանը՝ բողոքի հիման վրա:»:

Հոդված 19. Օրենսգրքի 426.2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու բողոք ներկայացնելու իրավունք ունեն՝

- 1) դատավարության մասնակիցները, բացառությամբ քրեական հետապնդման մարմինների.
- 2) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը և նրա տեղակալները:»:

Հոդված 20. Օրենսգրքի 426.5-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասից հանել «կամ հավատարմագրված փաստաբանին» բառերը.
- 2) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 21. Օրենսգրքի 426.6-րդ հոդվածի վերնագրից, 2-րդ և 3-րդ մասերից հանել համապատասխանաբար «կամ հավատարմագրված փաստաբանի», «կամ հավատարմագրված փաստաբանը,» և «կամ հավատարմագրված փաստաբանն» բառերը:

Հոդված 22. Օրենսգրքի 426.8-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«1. Դատարանը դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայում է վերանայման վարույթ հարուցելու որոշման հիման վրա:».
- 2) 2-րդ մասի 3-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 23. Օրենսգրքի 426.9-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Վերաքննիչ դատարանի դատական ակտն օրենքով սահմանված ընդհանուր կարգով կարող է բողոքարկվել վճռաբեկ դատարան:»:

Հոդված 24. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2009 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հիմքով հարուցված վարույթները սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո փոխանցվում են համապատասխանաբար վերաքննիչ կամ վճռաբեկ դատարան:

**Հայաստանի Հանրապետության
Նախագահ**

Ս. Սարգսյան

2008 թ. դեկտեմբերի 29
Երևան
ՀՕ-237-Ն

